Գ-31

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ ԱՇՈՏԻ

ԱՐԱԲՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ (1908-1914ԹԹ.)

Է.00.02 «ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ



ԵՐԵՎԱՆ - 2006

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Փոլադյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բայբուրդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու
Քոչարյան Հ.Մ.

Առաջատար կազմակերպություն — Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2006թ. հունիսի 16-ին ժ. 13-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ) գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհուրդում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2006թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար — Սաֆրաստյան Ռ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

I. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1908-1914թթ. արաբա-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական արդիականություն, այնպես էլ քաղաքական կարևորություն:

Ուսումնասիրվող շրջանում արաբների և երիտթուրքերի միջև հարաբերությունների և Օսմանյան կայսրությունում արաբական շարժմանն առնչվող հիմախնդիրների ուսումնասիրությունը պայմանավորված է արաբ ժողովրդի ազգային պայքարի բազմակողմանի վերլուծության և դրա զարգացումը պայմանավորող գործոնների ուսումնասիրման անհրաժեշտությամբ:

Հիշյալ ժամանակահատվածում արաբական ազգային, հասարակական-քաղաքական մտքի զարգացումը և երիտթուրքերի հետ արաբական շրջանակների շփման արդյունքում ի հայտ եկած մոտեցումները շատ դեպքերում պայմանավորեցին առաջին աշխարհամարտում արաբների դիրքորոշումը, ինչպես նաև շահեկան եղան անկախությանը միտված հետագա շարժումների և անկախ պետությունների ձևավորման տեսանկյունից:

Արաբական ազգային շարժման ուսումնասիրվող ժամանակաշրջանում ձևավորվեց նրա գաղափարախոսությունը, հստակեցվեցին հիմնական սկզբունքներն ու նպատակները, կանխորոշվեցին առանձնահատկությունները:

Թեմայի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համապարփակ ու խորն ընկալել նշված փուլում օսմանյան իրականության մեջ տեղի ունեցած հասարակական-քաղաքական զարգացումներն ու խմորումները, ցույց տալ դրանցում արաբների դերն ու մասնակցությունը: Թեմայի մանրակրկիտ ուսումնասիրությամբ էլ ավելի տեսանելի ու ընկալելի են դառնում նաև Օսմանյան կայսրության պատմության այս շրջանի ազգային փոքրամասնությունների հիմնահարցերը:

Այս խնդիրների հետազոտումը թույլ կտա վեր հանել արաբների խնդիրների նկատմամբ արաբական շրջանակների գործունեության, գաղափարախոսության և կողմնորոշումների տարբերություններն, ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Շարժման այս փուլում աչքի ընկած արաբ գործիչներից շատերը հետագայում դարձան արաբական երկրներում ծավալված ազգային-ազատագրական պայքարի ազդեցիկ առաջնորդներ, որոնք քաղաքական գործունեության իրենց հետագա մոտեցումներում լայնորեն կիրառեցին նախկինում ձեռք բերված փորձը՝ ապահովելով պայքարի բոլոր փուլերի բնականոն և անխափան ընթացքը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում

ձևավորված գաղափարներն ու սկզբունքները, ընհանուր առմամբ, նպաստեցին արաբների ազգային խնդիրների իրականացմանը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է 1908-1914թթ. Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում ծավալված ազգային շարժման համալիր և համակողմանի լուսաբանումից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Բացահայտել ուսումնասիրվող շրջանում արաբական շարժման ձևավորման նախադրյալները:
- Լուսաբանել շարժման բնույթն ու հետապնդած նպատակները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները:
- Քննության ենթարկել արաբական շարժման այս փուլի բնորոշ առանձնահատկությունները և դրանց վրա զգալի ազդեցություն գործած ներքին և արտաքին հանգամանքները:
- Քննարկել արաբական շարժման համատեքստում օսմանիզմի և արաբիզմի՝ միմյանց հակադիր գաղափարախոսությունների համատեղ առկայության չափազանց կարևոր, սակայն շարժման պատմագրության մեջ անհամեմատ քիչ ուսումնասիրված խնդիրը, որ մեծապես ազդել է շարժման վրա և պայմանավորել նրա բնույթը:
- Վեր հանել ապակենտրոնացման ձեռքբերմանն ուղղված արաբական շարժման էվոլյուցիոն փոփոխությունները, մասնավորաբար, շարժման հետագա արմատականացումը:
- Բացահայտել արաբական շարժման այս փուլի կարևոր նշանակությունն արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ձևավորման և նրա հետագա զարգացման համար:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թեև արաբների և երիտթուրքերի հարաբերություններին առնչվող առանձին խնդիրներ քննարկվել են Ն. Հովհաննիսյանի, Դ. Ֆրոմկինի, Ջ. Անտոնիուսի, Թ. Բիրուի, Հ. Կայալիի և այլոց աշխատություններում և գիտական հոդվածներում, սակայն երիտթուրքերի կառավարման շրջանում Օսմանյան կայսրությունում ծավալված ազգային շարժման այս

փուլը մեզանում առ այսօր չի դարձել ամբողջական և համալիր գիտական ուսումնասիրության առարկա:

Սույն աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում ընդարձակ փաստագրական և արխիվային նյութերի, ինչպես նաև տարբեր լեզուներով սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ համակողմանիորեն լուսաբանել արաբական շարժման այս կարևոր փուլի ամենատարբեր առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 1908-1914 թվականները՝ երիտթուրքերի իշխանության գալուց մինչև Առաջին աշխարհամարտն ընկած շրջանը: Երիտթուրքական հեղափոխությունը շրջադարձային էր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև արաբների համար: Ուսումնասիրվող շրջանի ընտրությունը պայմանավորված է արաբական ազգային շարժման այս փուլի առանձնակի նշանակությամբ: Վերոնշյալ շրջանում ձևավորված սկզբունքներն ու նպատակները, մասնակից հիմնական ուժերի ձեռք բերած հարուստ փորձը որոշեցին և ուղղորդեցին շարժման հետագա ողջ ընթացքը: I համաշխարհային պատերազմը միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց Օսմանյան կայսրությունում: Արաբական շարժումը կտրուկ փոխեց իր բնույթը, նպատակներն ու դրանց իրագործման մեթոդները:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը երիտթուրքերի կառավարման որոշակի շրջանում (1908-1914թթ.) Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում ծավալված ազգային շարժման, նրա նախադրյալների, այն պայմանավորող հիմնական գործոնների և նպատակների հետ կապված տեսակետների և հարցադրումների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ոչ միայն արաբների, այլև Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների պայքարի ամբողջական ընկալման ու գնահատման համար: Այն նաև թույլ կտա ավելի ճիշտ

ընթրոնել արաբական անկախ պետությունների կազմավորման և դրան հաջորդած զարգացումների առանձնահատկությունները: Արաբական մի շարք երկրներին հատուկ շատ գործընթացներ իրենց արմատներով հասնում են մինչև օսմանյան ժամանակաշրջան: Աշխատության եզրահանգումները կարող են օգտագործվել նաև արաբ ժողովրդի պատմությանն ու ազգային շարժմանը նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և նախնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում: Նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, թեզերում, Երիտասարդ արևելագետների XXV և XXVI հանրապետական գիտաժողովներում, ինչպես նաև 2005թ. Ծաղկաձորում «Առողջ հասարակություն» կազմակերպության նախաձեռնությամբ անցկացված Ասպիրանտ-գիտնական գիտաժողովում ընթերցած զեկուցումներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած հիմնադրույթների և հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրությունում արաբական շարժման ուսումնասիրվող շրջանին առնչվող հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են արաբ ազգային կուսակցությունների՝ մեր տրամադրության տակ եղած ծրագրային փաստաթղթերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս վերջիններիս հետապնդած նպատակների, ինչպես և շարժման մասին ընդհանրապես:

Աշխատանքում արծարծվող հիմնախնդիրների քննության տեսանկյունից չափազանց կարևոր են հատկապես Օսմանյան կայսրության սիրիական վիլայեթների նկատմամբ մեծ շահագրգռություն ունեցող տերության՝ Ֆրանսիայի արխիվային հարուստ նյութերը[1]: Դրանք մանրամասն ու հավաստի տեղեկություններ են տրամադրում մեզ հետաքրքրող խնդիրների

[1] Archives Affaires Etrangeres. Documents raparties du consulat general de Beyrouth, vol. 255, Carton 6, dossier 4, Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban. XVII, (1913), Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Relations avec les Puissances, XXII, Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban. XX, (1913); J. Hajjar. L'Europe les Destineés du Proche-Orient. La Natonalisme arabe, Syrien Entree la Jeune Turque et les Puissances (1908-1914), Damas, 1996.

վերաբերյալ, մասնավորաբար, Ստամբուլում ֆրանսիական դեսպանի՝ իր երկրի արտգործնախարարին հղած տեղեկատվությունը[2]:

Մենք հնարավորություն ենք ունեցել նաև օգտվել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնել ակադեմիկոս Մ. Ներսիսյանի՝ արաբական վիլայեթներում ցարական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչների արժեքավոր հաղորդումները պարունակող արխիվային եզակի նյութերը[3], որոնք հնարավորություն են տալիս համակողմանիորեն պատկերացնել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արաբական վիլայեթներում ընթացող գործընթացները:

Արաբ ազգային գործիչների նպատակների լուսաբանմանը մեծ չափով նպաստել են նաև այդ գործիչների ելույթների տեքստերը, հրապարակումներն ու նամակները, որտեղ առկա են առանձին կարևոր հարցերի վերաբերյալ նրանց տեսակետերը և այդ հարցերի լուծման տարբեր մոտեցումները: Այս առումով մեծ կարևորություն են ներկայացնում 1913թ. Փարիզում հրավիրված առաջին Արաբական կոնգրեսում արաբ գործիչների ելույթների, արաբների խնդիրների քննարկումներին ու դրանց շուրջ ծավալված բանավեճերին վերաբերող նյութերի հրապարակումները, որոնք մեծ չափով հստակեցնում են արաբների պահանջներն ու տարբեր հարցերի նկատմամբ առանձին շրջանակների դիրքորոշումների տարբերությունները[4]:

Այս խիստ արժեքավոր նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս նշմարել շարժման նոր ասպեկտներ և մանրամասներ, վերանայել և նորովի ներկայացնել շարժման

[2] Նույն տեղում:

[3] Депеша дипломатического тайного советника Зиновьева из Константинополя. МИД Российское Императорское консульство в Джеде. Копия с донесения консула в Дамаске ком. сов. князя Шаховского на имя господина императорского посла в Константинополе от 27-го марта 1909 г. МИД Императорское Российское консульство в Бассоре 16-го августа 1913 года.. Каир, депеша С.Д. Сазонову, 5 апреля 1914 г. МИД Императорское Российское консульство в Бассоре в первый департамент Министерства иностранных дел. 22-го ноября 1913 года. Российское Императорское генеральное консульство в Константинополе, 2-го октября 1913 г. секретно. Его превосходительству А.А. Нератову. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, հատոր III և V (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

[4] Thomas D, The First Arab Congress and the Committee of Union and Progress 1913-1914 // D. Little, Essays on Islamic Civilization., Brill, 1976, Tarabein Ahmed, Abd al-Hamid al-Zahrawi: The Career and Thought of an Arab Nationalist // R. Khalidi, L. Anderson, M. Muslih, R. Simon, The Origins of Arab Nationalism, N.Y., 1991, J. Hajjar. L'Europe les Destineés du Proche-Orient. La Natonalisme arabe, Syrien Entree la Jeune Turque et les Puissances (1908-1914), Damas, 1996, T. Abdeljelil, Politique des Jeunes Turcs en Bilad esh-Sham et revolte Arabe en 1916: Nouvel essai d'interpretation // Tamini, Revue d'histoire Magrebine, Numeros 65-66, Août, Tunisie 1992.

մասնակից ուժերի գործունեության մասին ընդունված և տարածված առանձին տեսակետներ:

Երիտթուրքերի քաղաքականության տարբեր կողմերի և, հատկապես, նրա ազգային քաղաքականության ուսումնասիրման և գնահատման գործում մեծ է հայ գիտնականների ներդրումը: Այդ քաղաքականության համակողմանի վերլուծությունը ներկայացված է Հ. Ինճիկյանի, Ջ. Կիրակոսյանի, Ե. Նաջարյանի, Յու. Պետրոսյանի, Ե. Սարգսյանի, Ռ. Սաֆրաստյանի, Հ. Սիմոնյանի և այլ գիտնականների աշխատություններում[5], որոնք չափազանց օգտակար են եղել արաբների նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը քննության ենթարկելու առումով:

Թուրք-արաբական հարաբերությունները, ինչպես նաև արաբական շարժման շատ հարցեր հանգամանորեն քննարկվել են Ն. Հովհաննիսյանի արժեքավոր ուսումնասիրություններում[6], որոնք մեծ չափով նպաստել են մեր առջև դրված հիմնախնդիրների բազմակողմանի լուսաբանմանը:

Ատենախոսությունը շարադրելիս լայնորեն օգտագործել ենք խորհրդային հետազոտողների՝ մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող մենագրությունները, կոլեկտիվ հրատարակությունները և հոդվածները, որոնցում առկա է հարուստ փաստագրական նյութ և հարցերի հանգամանալի վերլուծություն: Հարկ է հիշատակել հատկապես Լ. Կոտլովի, Մ. Լազարևի, Վ. Լուցկիի, Ի. Լևինի, Ա. Դոլինինայի, Ի. Շպիլկովայի, Ա. Տիրկովայի, Գ. Ալիևի և այլոց աշխատությունները[7]:

[5] О. Инджикян, Буржуазия Османской империи, Е. 1977, Дж. Киракосян, Младотурки перед судом истории, Е., 1986, Ե.Նաջարյան, Արաբական ազգային մշակութային զարթոնքը, Եր., 1988, Ю. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX– начало XX в.), М,, 1971, Ю.Петросян, Османская империя. Могущество и гибель. Исторический очерк, М., 1990г, Е. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье, Е., 1962, Ռ. Սաֆրաստյան, Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում (1908-1916թթ.), Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Եր., 1986, Հր. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:

[6] Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ.II, Եր., 2004, Ն.Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո, Եր., 2004:

[7] Л.Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, Л.Котлов, Становление национально-освободительного движения на Арабском востоке М., 1975, М.Лазарев, Крушение турецкого господства на Арабском востоке, М., 1960, В.Луцкий, Национально освободительная война в Сирии (1925-1927), М., 1964, В.Луцкий, Новая истирия арабских стран, М., 1948, И.Левин, Арабские страны, Зарождение идеологии национально-освободительного движения (XIX-начало XX в.), сборник статей, М. 1973, И. Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, А.Долинина,

Օսմանյան կայսրությունում արաբական շարժման ձևավորման, զարգացման առանձնահատկությունների, ինչպես նաև արաբ ազգային կուսակցությունների և կազմակերպությունների գործունեության մասին բազմաբնույթ և ընդարձակ տեղեկություններ են տրամադրում արևմտյան պատմաբանները: Ուշադրության արժանի են հատկապես Ջ. Անտոնիուսի, Ե.Դաունի, Դ. Ֆրոմկինի, Յ. Չուուերիի, Ա. Ֆերուզի, Է. Յանգի, Պ. Իռելանդի, Ժ. Լյուգոլի, Զ. Նուսեյնբեհի, Ֆ. Նետլոնի, Վ. Օսենվալդի, Ս. Լոնգրիգի և այլոց աշխատանքները[8]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում տիրող իրադրությունը ճշգրիտ պատկերացնելու համար առանձնակի կարևորություն են ներկայացնում արաբ հեղինակներ Թ. Բիրուի, Հ. Կայալիի, Ա. Հուրանիի, Ջ. Հադադի, Զ. Զեյնի, Ռ. Խալիդիի ուսումնասիրությունները, ինչպես նաև արաբերեն լեզվով հրատարակված փաստաթղթերի ժողովածուները[9]:

Очерки истории арабской литературы нового времени. Египет и Сирия. 1870-1914гг., М,, 1973, И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909гг., М., 1977, А. Тыркова, Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916, Г. Алиев, Турция в период правления младотурок (1908-1918г.), М., 1972.

[8] G.Antonius, The Arab Awakening. The Story of the Arab National Movement, N.Y., 1947, E. Dawn, From Ottomanism to Arabism, Illinois, 1979, D. Fromkin, A Peace to End All Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, N.Y., 1989, Y.Choueiri, Arab Nationalism. A History Nation and State in the Arab World, Oxford, 2000, F. Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914, Oxford, 1969, E.Jung, La revolte Arabe. De 1906 a la revolte de 1916, Paris, 1924-25, P.Ireland, Iraq a Study in Political Development, L., 1937, J.Lugol, Le panarabisme. Passe, Present, Avenir. Le Caire, 1946, Z. Nuseinbeh, The Ideas of Arab Nationalism, N.Y., 1956, F.Nettlon&W.Ochsenwald, The Middle East. A History, N.Y., 1990, S. Lonrigg, Iraq 1900 to 1950. A Political, Social and Economic History, Oxford, 1953, M.Hanioglu, The Young Turks on the Verge of the 1908 Revolution //Varia Turcica XIII, Premiere Rencontre Internationale sur l'Empire Ottoman et la Turquie Moderne, Istanbul-Paris, 1991, A. Hansu, The Revolution in Turkey, Leiden, 1997.

[9] A.Haurani, Arabic Thought in the Liberal Age 1798-1939, L., 1970, G. Haddad, Fifty Years of Modern Syria and Lebanon, Beirut, 1950, Z.W. Zein, Arab-Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958, R. Khalidi, Ottomanism and Arabism in Syria before 1914: A Reassessment // R.Khalidi, L.Anderson, M.Muslih, R.Simon, The Origins of Arab Nationalism, N.Y., 1991, R.Khalidi, Society and Ideology in Late Ottoman Syria: Class, Education, Profession and Confession // John Spagnolo, Problems of the Modern, Middle East in Historical Perspective, Beirut, 1992,

الدكتور توفيق برو. العرب و الترك فى العهد الدستورى العثمانى ١٩٠٨-١٩١٤، دمشق ١٩٩١.

حسن قايالى. الحركة العربية بعيون عثمانية (١٩٠٨-١٩١٨)، دمشق ٢٠٠٣.

وثائق المؤتمر العربي الأ ول ١٩١٣، بيروت، ١٩٨٠.

عن المسائل السياسية التى جرت تدقتقها بديوان الحرب العرفى المتشكل بعاليه. لثر هذه الا يضاحات من قبل قائد العام للجيش الرابع.

Հարկ է նշել, որ հիշատակված թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան, և՛ թե արաբ հեղինակները նույն հարցերի վերաբերյալ հաճախ ցուցաբերում են տարբեր, երբեմն նույնիսկ միանգամայն հակադիր մոտեցումներ, ինչը պայմանավորված է նրանց քաղաքական կողմնորոշումների և տեսակետների տարբերությամբ:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է առաջաբանից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից), վերջաբանից, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆԻ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակները ու դրույթները, գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «1908Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱԲԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄԻՆՉԵՎ 1909Թ. ԱՊՐԻԼ)», անդրադառնում է մինչհեղափոխական շրջանում Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում տիրող իրադրությանը, հեղափոխության նախապատրաստմանն ու իրականացմանը կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում նաև արաբների ցուցաբերած աջակցությանը և հեղափոխության հաղթանակից հետո սկզբնական շրջանում իթթիհադականների հանդեպ նրանց դիրքորոշմանը:

Գլխի <u>առաջին ենթաբաժնում՝</u> «Արաբական հասարակությունը երիտթուրքական հեղափոխության նախօրյակին», լուսաբանվում է արաբական վիլայեթներում և արտերկրում արաբական ընդդիմադիր կազմակերպությունների գործունեությունն ու նպատակները, ինչպես նաև արաբների նկատմամբ կենտրոնական իշխանությունների վարած քաղաքականությունը:

Այս շրջանում արաբական կազմակերպությունների գործունեությունը հաստատում է այն իրողությունը, որ հատկապես Օսմանյան կայսրության տարածքում գործող կազմակերպություններն ու խմբավորումները բավական սերտ կապեր ունեին երիտթուրքերի հետ: Դրանում մեծապես շահագրգռված էին նաև երիտթուրքերը, հստակորեն գիտակցելով, որ իրենց նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համախմբել կայսրության բոլոր հակաաբդուլհամիդյան ուժերին, մանավանդ արաբներին, որոնք տարբեր տվյալների

համաձայն կազմում էին կայսրության ամենամեծաթիվ ազգային տարրը՝ ողջ բնակչության մոտ 35-ից 40%-ը: Ենթաբաժնում քննարկվում են երիտթուրքերի և ոչ թուրք ազգային ուժերի համախմբմանն ուղղված ջանքերը և այդ նպատակի իրականացման նախադրյալները: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ 1907թ. դեկտեմբերի 27-29-ը Փարիզում անցկացված երիտթուրքական երկրորդ կոնգրեսը, որին մասնակցում էին նաև արաբական կազմակերպություններ: Կոնգրեսում ընդունված որոշումները մեծ չափով նպաստեցին երիտթուրքական հեղափոխության նախօրեին կայսրության ազգային ուժերի համախմբմանը:

<u>Երկրորդ ենթաբաժնում՝</u> «Երիտթուրքական հեղափոխության հաղթանակը. արաբ գործիչների և կազմակերպությունների աջակցությունը իթթիհադականներին», ներկայացվում է 1908թ. հեղափոխության հաղթանակից հետո երիտթուրքերի նկատմամբ կայսրությունում ձևավորված որոշակի մթնոլորտը:

Հեղափոխության հաղթանակը և Սահմանադրության վերականգնման լուրը մեծ խանդավառությամբ ընդունեցին կայսրության բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև արաբները: Արաբ ազգային գործիչները հույս էին տածում, որ երիտթուրքերի հաղթանակը հնարավոր կդարձնի արմատական փոփոխությունների իրականացումն արաբական վիլայեթներում: Ոգևորված երիտթուրքերի՝ Օսմանյան կայսրության ողջ ազգաբնակչության հավասարության խոստումներով, արաբների մի մասը հնարավոր էր համարում կայսրության սահմաններում ինքնավարության ձեռքբերումը: Պատահական չէ, որ հենց այս ժամանակ ստեղծվեցին արաբական մի շարք կազմակերպություններ, որոնք, ներշնչված այդ ակնկալիքներով, իրենց նպատակների իրականացմանն ուղղված պրակտիկ գործունեությունը կապում էին իթթիհադականների հետ:

1908թ. սեպտեմբերի 2-ին (մեկ այլ տվյալով՝ օգոստոսի 5-ին) ստեղծվեց արաբական օրինական առաջին կազմակերպությունը՝ «Արաբ-օսմանյան եղբայրությունը» («Ալ-իխա ալ-արաբի ալ-օսմանի»), որի թե՛ խոսուն անվանումը և թե՛, մանավանդ, ծրագրի բովանդակությունն արտահայտում էին կազմակերպության նպատակները ու նրա գործունեության ուղղվածությունը: Դատելով ընկերության ծրագրային հիմնադրույթներից՝ նրա նպատակները բավական չափավոր էին: Այդուհանդերձ, առկա են մի շարք հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում ընկերության միանշանակ իթթիհադական կողմնորոշումը:

<u>Երրորդ ենթաբաժնում՝</u> «1908թ. խորհրդարանական ընտրությունները և արաբ պատգամավորների գործունեությունը», քննարկվում են 1908թ. հոկտեմբեր-նոյեմբեր

ամիսներին անցկացված խորհրդարանական ընտրությունների ընթացքն ու արդյունքները: Երիտթուրքերին տարատեսակ խախտումների, ճնշումների և մեքենայությունների շնորհիվ հաջողվեց խորհրդարանում ապահովել թուրքական տարրի գերակայությունն այլազգի պատգամավորների նկատմամբ: Օրինակ, ընտրատարածքների ձևավորման մասին օրենքը, որը, փաստորեն, մեկ պատգամավորի ընտրության իրավունք էր տրամադրում 50 հազար բնակչություն ունեցող շրջաններին՝ միաժամանակ նույնանման իրավունք վերապահելով նաև 25 հազարից ոչ պակաս և 75 հազարից ոչ ավել ազգաբնակչություն ունեցող շրջաններին: Իթթիհադականները հմտորեն օգտագործելով այս հնարավորությունը՝ թուրքերի թվական գերազանցություն ունեցող շրջանները միտումնավոր կերպով մասնատում էին մանր ընտրատարածքների, իսկ այլ ազգություններով բնակեցված տարածքներում, կատարվում էր հակառակը: Այսպիսով, արաբները, տարբեր հանգամանքների բերումով, չկարողացան խորհրդարանում զբաղեցնել համապատասխան քանակի տեղեր: Սակայն նույնիսկ այս պարագայում խորհրդարանի գրեթե կեսը կազմեցին ոչ թուրք պատգամավորները, ինչը նրանց հնարավորություն էր տալիս համախմբվել մի ընդհանուր դաշինքի մեջ և հետամուտ լինել իրենց ազգային պահանջների իրականացմանը: Մինչդեռ իրականում այս հնարավորությունը վերջիններս չօգտագործեցին, քանի որ ազգային խմբավորումներից յուրաքանչյուրի առաջնահերթ նպատակը զուտ տեղային խնդիրների լուծումն էր, ինչը, բնականաբար, չնպաստեց նրանց ուժերի միավորմանը և, միաժամանակ, թուրքերին հնարավորություն տվեց ունենալ գերակայող դիրք: Խորհրդարանի 275 պատգամավորներից 65-ը ընտրվել էին արաբական վիլայեթներից (նրանցից 15-ը ազգությամբ թուրք էին): Պատգամավոր էին ընտրվել նաև 25 ալբանացի, 23 հույն, 12 հայ, 4 բուլղարացի, 5 հրեա, 3 սերբ և 1 վալախ, իսկ թուրք պատգամավորների թիվը 152 էր: Խորհրդարանի աշխատանքների հենց սկզբում արաբ պատգամավորներն ստեղծեցին «արաբական դաշինքը», որը, սակայն, զուտ ձևական էր քանի որ նրա անդամները կապված չէին ընդհանուր քաղաքական հայացքներով: Այսպիսով, արաբ պատգամավորները խորհրդարանի աշխատանքի առաջին տարվա ընթացքում չկարողացան լուրջ ընդդիմություն ստեղծել «Իթթիհադ վե թերաքքիին» և խորհրդարանում բարձրացնել արաբական ազգային խնդիրներ:

Երկրորդ գլուխը՝ «ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (1909Թ. ԱՊՐԻԼ-1912Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)», անդրադառնում է այդ շրջանում Օսմանյան կայսրությունում ստեղծված իրադրության քննարկմանը, երիտթուրքերի նկատմամբ արաբների դիրքորոշման փոփոխությանը և այն պայմանավորող հանգամանքների վերլուծությանը:

Առաջին ենթաբաժնում՝ «1909թ. «մարտի 31-ի» դեպքերը և արաբա-իթթիհադական հակասությունների ի հայտ գալը», քննարկվում են երիտթուրքերի դեմ ընդդիմության ձևավորման և ակտիվացման գործոնները, ընդդիմադիր հիմնական ուժերի՝ «Մուհամմեդի ընկերություն» կազմակերպության, «Ահրար» կուսակցության, ինչպես նաև խորհրդարանում հակաիթթիհադական ընդդիմության գործունեությունը, ինչն ի վերջո հնարավոր դարձրեց սուլթանական վարչակարգի կողմնակիցների և «Իթթիհադ վե թերաքքիի» հակառակորդների՝ 1909թ. «մարտի 31-ի» խռովության իրականացումը: Լուսաբանվում են նաև խռովության ճնշումից հետո երիտթուրքերի ազգային քաղաքականության մեջ կատարված փոփոխությունները: Մասնավորաբար, իշխանության վերադառնալով, իթթիհադականները լիովին հրաժարվեցին ազատության և իրավահավասարության իրենց նախկին բարձրագոչ խոստումներից և սկսեցին աստիճանաբար սահմանափակել կայսրության ոչ թուրք ժողովուրդների իրավունքները: Ենթաբաժնում քննարկվում են հակաիթթիհադական ընդդիմության ձևավորման դրդապատճառները և դրա առանձին արտահայտությունները: Արաբա-թուրքական հակասությունների առիթ դարձավ հատկապես արաբերեն լեզվի նկատմամբ իթթիհադական ղեկավարների դիրքորոշումը: Եթե իշխանության սկզբնական շրջանում վերջիններս արաբական վիլայեթներում արաբերեն լեզվի գործածմանը գոնե արտաքուստ վերաբերվում էին քիչ թե շատ հանդուրժողաբար, ապա 1909թ. հետո, այլևս հարկ չհամարելով որևէ չափով սքողել իրենց իսկական դիտավորությունները, բացահայտորեն սկսեցին վարել արաբերենը դուրս մղելու և արաբ ազգաբնակչության ձուլման քաղաքականություն, ինչը միանգամայն համահունչ էր կայսրությունում թուրքական տարրի գերակայության ապահովման նպատակին:

Երկրորդ ենթաբաժինը՝ «Նոր սերնդի արաբական կազմակերպություններ», ներկայացնում է 1909թ. «մարտի 31-ի» դեպքերից հետո կայսրությունում և արտերկրում հիմնված արաբ ազգային կազմակերպությունների գործունեությունը:

Իթթիհադականների վարած ազգային քաղաքականության ակնհայտ փոփոխությունը հիասթափեցրեց արաբ քաղաքական ակտիվ ուժերի մեծ մասին: Նրանց ջանքերով հիմնվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց հիմնական առաքելությունը

տեսնում էին ինքնավարության ձեռքբերման ընդհանուր գաղափարական հիմքի վրա արաբական ազգային ուժերին միավորելու մեջ: Մասնավորաբար քննարկվում է «Ալ-Կահտանիա», «Գրական ակումբ» («Ալ-մութանաբա ալ-ադաբի»), «Երիտասարդ Արաբիա» («Ջամիա ալ-արաբիյա ալ-ֆաթթա») առավել աչքի ընկնող և արաբական շարժման մեջ կարևոր դերակատարություն ունեցած կազմակերպությունների գործունեությանը, ինչը հնարավորություն է տալիս ընկալել շարժման այս շրջանի հիմնական առանձնահատկությունները: Այս ենթաբաժնում փորձ է արվում նոր սկզբնաղբյուրների ներգրավմամբ ճշգրտել նաև այդ կազմակերպությունների գործունեության հետ կապված առանձին հարցեր և տարածված տեսակետներ: Այս կազմակերպությունները, հատկապես, «Գրական ակումբն», առաջինն էին, որ արաբ ժողովրդին սկսեցին դիտել ոչ թե որպես «օսմանյան ազգի» մի մաս, այլ որպես առանձին ազգային տարր՝ իր հիմնահարցերով, որի առջև դրված էր իր ինքնության պահպանման առաջնային խնդիրը:

Վերոհիշյալ կազմակերպությունները և նրանց առաջ քաշած նոր գաղափարները մեծապես ազդեցին արաբա-թուրքական հետագա հարաբերությունների վրա, իսկ նրա անդամները դարձան ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ:

<u>Երրորդ ենթաբաժնում</u>՝ «Արաբական գործոնը համաօսմանյան ընդդիմադիր կազմակերպությունների գործունեության համատեքստում», քննարկվում են 1910-1911թթ. արաբ ազգային կազմակերպությունների, խմբավորումների և խորհրդարանի արաբ պատգամավորների գործունեության ակտիվացման և իթթիհադականների ոչ թուրք հակառակորդների հետ նրանց մերձեցման նախադրյալները, նրանց մասնակցությունը համաօսմանյան ընդդիմադիր կուսակցությունների ստեղծմանն ու աշխատանքներին, ինչը միանգամայն օրինաչափ էր արաբական շարժման էվոլյուցիայի այս փուլի համար:

Հակաիթթիհադական ընդդիմության հետ արաբ ազգային ուժերի համագործակցությունը ձևավորվեց արաբներին վերաբերող խորհրդարանական բուռն բանավեճերի ժամանակ, որոնց ընթացքում արաբ և այլազգի ընդդիմադիր պատգամավորների դիրքորոշումներն ու նպատակները շատ դեպքերում համընկնում էին:

Ենթաբաժնում, մասնավորապես, քննարկվում են «Չափավոր լիբերալներ» համաօսմանյան կուսակցության ձևավորման հանգամանքներն ու նրա գործունեության հիմնական ոլորտները: Այս կուսակցությունը կազմված էր մի քանի ազգային խմբավորումներից, որոնք հետամուտ էին Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների իրավունքների պաշտպանությանը: Այն առաջին ընդդիմադիր կուսակցություններից մեկն էր, որին հաջողվեց համախմբել հակաիթթիհադական կողմնորոշում ունեցող տարբեր ուժերի,

գերակշռաբար նաև արաբների և մեծապես նպաստեց համաօսմանյան ընդդիմադիր հասարակական շարժման զարգացմանը:

«Չափավոր լիբերալներն» առաջ էին քաշում կայսրության բոլոր ժողովուրդների միասնականության և համագործակցության ամրապնդման նպատակը՝ դրա իրականացման համար անհրաժեշտ համարելով ընդարձակել նրանց իրավունքները կառավարության մեջ և ապահովել կայսրության ազգերի ներկայությունը կենտրոնական իշխանության կազմում:

Արաբ ազգային գործիչները «Չափավոր լիբերալների» կուսակցությունն ընկալում էին որպես ազդեցիկ ուժ իրենց ազգային խնդիրների լուծման համար:

<u>Չորրորդ ենթաբաժինը</u>՝ «Թուրք-իտալական պատերազմը և արաբների վերաբերմունքը», անդրադառնում է 1911-1912թթ. թուրք-իտալական պատերազմի և, հատկապես, նրա հետևանքների նկատմամբ կայսրության արաբների վերաբերմունքին, ինչն անմիջապես պայմանավորված էր Օսմանյան կայսրության հանդեպ նրանց դիրքորոշմամբ և իրենց ազգային խնդիրներով:

Թուրք-իտալական պատերազմի հենց սկզբից պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրությունը ընդունակ չէ դիմակայել նույնիսկ համեմատաբար թույլ եվրոպական պետությանը: Վիճակը բարդանում էր նրանով, որ ատիճանաբար հավանական էր դառնում Օսմանյան կայսրության զգալի մասի մասնատումը եվրոպական պետությունների միջև: Արաբների մեծ մասը միանգամայն համոզված էր, որ այդ պայմաններում անջատումը կայսրությունից անխուսափելիորեն մեծապես կնպաստի արաբական վիլայեթների վերածմանը եվրոպական տերությունների գաղութի:

Իտալիայի ներխուժումը Լիբիա արաբ ազգային ուժերն ընդունեցին իբրև համաարաբական խնդիր: Արաբական վիլայեթներում կազմակերպվում էին հակաիտալական ցույցեր և ելույթներ: Քաղաքական և հասարակական շատ կազմակերպությունների նախաձեռնությամբ կազմվում էին կամավորական ջոկատներ:

Իթթիհադական ղեկավարները չէին թաքցնում, որ Թուրքիան ստիպված կլինի համակերպվել Տրիպոլիի և Կիրենաիկայի «ժամանակավոր» կորստի հետ և պատրաստ չէին ջանքեր գործադրել այդ կորուստը կանխելու համար: Իթթիհադականների նման դիրքորոշումն արդարացի զայրույթ առաջացրեց արաբական ազգային շրջաններում, սակայն, ընդհանուր առմամբ, չնվազեցրեց արաբների և թուրքերի միասնական գործելու հանդեպ հավատը: Պատահական չէ, որ այս ընթացքում արաբներն սկսեցին ավելի ակտիվորեն ներգրավվել համաօսմանյան ընդդիմադիր կուսակցությունների շարքերը:

Պարտությունը պատերազմում մեծ չափով թուլացրեց իթթիհադական ղեկավարների քաղաքական դիրքերը, պատճառ դարձավ իշխանափոխության և ուղղակիորեն ազդեց կայսրությունում ծավալված հետագա գործընթացների վրա:

Հինգերորդ ենթաբաժնում՝ «Հուրրիյեթ վե իթիլաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը և արաբները», արծարծվում են իթթիհադականներին ընդդիմադիր կուսակցության ձևավորման հանգամանքները և երիտթուրքերին իշխանությունից հեռացնելու հիմնական նպատակը:

Կուսակցության մեջ կարևոր դեր էին խաղում ոչ թուրք, հատկապես արաբ հեղինակավոր ազգային գործիչները, որոնց մի մասը ներկայացված էր կուսակցության ղեկավար մարմիններում, հանգամանք, ինչը հարկադրում էր իթիլաֆական ղեկավարներին հաշվի առնել նրանց ազգային ձգտումները:

Արաբ գործիչներն ի դեմս «Հուրրիյեթ վե իթիլաֆի» տեսնում էին այն ուժը, որի օգնությամբ հույս ունեին իրականացնել իրենց նպատակները: Կուսակցության հիմնադիրների շարքում էին նաև արաբ գործիչներ Աբդ ալ-Համիդ ազ-Զահրավին և Թահիր Հայրադին բեյը:

Արաբների համար հատկապես գրավիչ էր այն, որ «Հուրրիյեթ վե իթիլաֆ» կուսակցությունը առաջ էր քաշում ապակենտրոնացման գաղափարը, ինչը նրանց ծրագիրը և քարոզչությունն ընդհանրապես արաբական վիլայեթներում դարձնում էր առավել ընկալելի և ընդունելի:

Իր ստեղծման պահից կուսակցությունը բացահայտ պայքարի մեջ մտավ իթթիհադական կառավարության հետ: Այսպիսի լարված իրադրության պայմաններում իթթիհադական կառավարությունը նպատակահարմար գտավ ցրել խորհրդարանը, որտեղ իթիլաֆականներն արդեն հասցրել էին մեծամասնություն կազմել: Չնայած հատկապես արաբական վիլայեթներում իթիլաֆի հանդեպ ձևավորված նպաստավոր մթնոլորտին՝ այսուհանդերձ, 1912թ. գարնանը սկսված խորհրդարանական ընտրարշավի ժամանակ «Իթթիհադ վե թերաքքին» կարողացավ տարատեսակ ճնշումների գործադրմամբ խորհրդարանում ապահովել իր գերակայությունը: Սակայն կարճ ժամանակ անց իրադրությունը հիմնովին փոխվեց: Մի շարք հանգամանքների բերումով իթիլաֆականներին հաջողվեց արդեն հուլիսին կազմել նոր կառավարություն, որն այդպես էլ չարդարացրեց արաբների սպասելիքները: Վերջնականապես կորցնելով հավատը և վստահությունն իթիլաֆի նկատմամբ՝ արաբ ազգային գործիչներն ստիպված եղան իրենց գլխավոր նպատակների իրականացման համար այլ ուղիներ որոնել:

Նույն ենթաբաժնում քննարկվում է նաև 1912թ. սկսված Բալկանյան առաջին պատերազմի հանդեպ արաբների դիրքորոշումը, պատերազմ, որն իր ծանր հետևանքներով վերջնականապես հեղինակազրկեց առանց այն էլ վարկաբեկված իթիլաֆական կառավարությանը:

Արաբների արձագանքը պատերազմին միանշանակ չէր: Նրանց զգալի մասը համոզված էր, որ այն քրիստոնյաների և մահմեդականների հակամարտության հետևանք է, ինչն ավելի սաստկացրեց քրիստոնյա արաբների ձգտումը դեպի Եվրոպա: Մինչդեռ մահմեդական արաբները պահանջում էին Բալկաններում իրականացնել ավելի կոշտ քաղաքականություն և ոչ մի պարագայում թույլ չտալ նրանց անջատումը կայսրությունից: Այսպիսի դիրքորոշումը մեկ անգամ ևս վկայում է, որ արաբների գերակշիռ մասը կայսրության միասնականության պահպանումն ու հզորությունը շարունակում էր դիտել որպես արաբական հարցի լուծման երաշխիք: Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, սակայն, ապակենտրոնացման արաբ կողմնակիցների համար պարզ դարձրեց այն Օսմանյան իշխանությունների միջոցով իրականացնելու միանգամայն անհեռանկար լինելը: Անհրաժեշտ էր ստեղծել համաարաբական այնպիսի կազմակերպություն, որը կկարողանար համախմբել արաբական քաղաքական և հասարակական ուժերին, համակարգել և ղեկավարել միասնական նպատակին ուղղված նրանց գործողությունները:

Երրորդ գլխում՝ «ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ», ներկայացվում է Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում ապակենտրոնացման շարժման ակտիվացման, այնուհետև նաև նրա ակնհայտ արմատականացման պայմաններում ազգային գաղափարներին հետամուտ նոր կազմակերպությունների ձևավորումը:

Այս գլխի առաջին ենթաբաժինը՝ «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը և բարեփոխումների շարժումը արաբական վիլայեթներում» նվիրված է արաբական շարժման զարգացման այս փուլում մի խումբ սիրիացի վտարանդի գործիչների Կահիրեում հիմնած «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության» («Հիզբ ալ-լամարքազիյա ալ-իդարիյա ալ-օսմանիյա») գործունեության քննարկմանը:

Կուսակցությունն իր հայտարարություններում հիմնավորում էր բազմակրոն և բազմազգ օսմանյան կայսրության ապակենտրոնացման անհրաժեշտությունը և դրա առավելությունները: Այն իր առջև նպատակ էր դրել պահպանել կայսրությունն արտաքին ճնշումներից և ներքին ընդվզումներից, համախմբել կայսրության բոլոր ժողովուրդներին կենտրոնական իշխանության՝ «Օսմանյան թագի» շուրջ՝ ապահովելով նրա

ամբողջականությունը: Լամարքազիայի հենց այս հիմնադրույթներից էր բխում կուսակցության 16 կետից բաղկացած ծրագիրը, որի 1 և 2 կետերում հատկապես ընդգծվում էր, որ յուրաքանչյուր վիլայեթ սուլթանության անբաժանելի մասն է և ոչ մի դեպքում չի կարող ինքնակամ անջատվել նրանից: Սակայն յուրաքանչյուր վիլայեթի տեղական վարչությունը պետք է կազմվեր ապակենտրոնացման հիման վրա: Այսպիսի մոտեցումն ուղղակի ենթադրում էր Օսմանյան կայսրության պահպանում՝ ապակենտրոնացման միջոցով, ինչը և ներկայացվում էր իբրև կայսրության հետագա գոյության միակ ընդունելի տարբերակ:

Լամարքազիան իր շուրջը համախմբեց արաբական վիլայեթների ապակենտրոնացման կողմնակիցներին: Նրա մեջ ներգրավվեցին հասարակական փոփոխությունների ակտիվ կողմնակիցներ Ռաշիդ բեյ ալ-Ազմը, Մուհամմադ Ռաշիդ Ռիդան, ինչպես նաև «Երիտասարդ Արաբիայի» անդամներ Աբդ ալ-Ղանի ալ-Ուրեյսին և Աունի Աբդ ալ-Հադին:

Կուսակցության ծրագրային դրույթները հետզհետե ձեռք բերեցին համաարաբական նշանակություն: Լամարքազիայի քաղաքական վարկանիշն այնքան բարձր էր, որ նրան վստահվեց 1913թ. Փարիզում գումարված Արաբական առաջին կոնգրեսի ղեկավարությունը: Կուսակցության գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս հավաստել, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արաբա-թուրքական հարաբերությունների աննախադեպ վատթարացման պայմաններում այն գնալով ավելի արմատական դարձավ:

Ենթաբաժնում քննարկվում են նաև արաբական վիլայեթներում Բարեփոխումների կոմիտեների գործունեությունը, որոնց հիմնական նպատակը դարձյալ ապակենտրոնացման ձեռքբերումն էր: Այս կոմիտեները գործնականում վերածվեցին հասարակական և քաղաքական կյանքի կենտրոնների, որոնք մեծապես ազդում էին վիլայեթների ներքին իրադրության, երբեմն նույնիսկ կենտրոնական իշխանությունների վրա: Արևելյան և արևմտյան պատմագրության մեջ, օրինակ, Բասրայի և Բեյրութի կոմիտեները որակվում են իբրև քաղաքական կազմակերպություններ: Պատահական չէ, որ իթթիհադական կառավարությունը բոլոր միջոցները գործադրեց՝ սահմանափակելու այդ «վտանգավոր» կառույցների գործունեությունը: 1913թ. մարտի 26-ին իշխանությունները հրապարակեցին Վիլայեթների մասին օրենքը, որը, փաստորեն, արգելում էր նաև Բարեփոխումների կոմիտեների գործունեությունը: Թեև բարեփոխումների կոմիտեներին այդպես էլ չհաջողվեց իրականացնել իրենց ծրագրային պահանջները, սակայն նրանք էական ազդեցություն ունեցան արաբական ազգային շարժման վրա:

Երրորդ գլխի <u>երկրորդ ենթաբաժինը՝</u> «Առաջին արաբական կոնգրեսը և նրա հետևանքները», նվիրված է 1913թ. կեսին արաբական ազգային ուժերի համախմբման անհրաժեշտության և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների քննարկմանը:

1913թ. հունիսի 18-23-ը Փարիզում հրավիրվեց Առաջին արաբական կոնգրեսը, որի նպատակն էր ոչ միայն համակարգել և նպատակաուղղել Օսմանյան կայսրության և նրա սահմաններից դուրս արաբական քաղաքական ուժերի գործունեությունը, այլև ցույց տալ օսմանյան ղեկավարությանը, որ արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման պահանջը ստեղծված պայմաններում այլընտրանք չունի:

Արաբական առաջին կոնգրեսը մեծ չափով նպաստեց իրենց ուժերի նկատմամբ արաբների վստահության ամրապնդմանը և անժխտելիորեն կարևոր դեր խաղաց արաբական ազգային-ազատագրական շարժման ձևավորման և հետագա զարգացման գործում:

Այս ենթաբաժնում հանգամանորեն քննարկվում են նաև կոնգրեսի հրավիրումն ու նրա աշխատանքները կասեցնելու ուղղությամբ իթթիհադական ղեկավարների ձեռնարկած ապարդյուն ջանքերը, ինչպես նաև հետագայում իթթիհադականների և կոնգրեսի ղեկավարների միջև կնքված համաձայնագիրը: Իթթիհադականները, փաստորեն, ընդունում էին կոնգրեսի որոշման պահանջները, սակայն կարճ ժամանակ անց հրաժարվեցին դրանք իրականացնել, ինչը հերթական անգամ առիթ տվեց արաբ ազգային շրջանների դժգոհության սաստկացմանը:

<u>Երրորդ ենթաբաժնում՝</u> «Ալ-Ահդ» կազմակերպությունը: Իրադրությունը արաբական վիլայեթներում Առաջին աշխարհամարտի նախօրեին», քննարկվում են արաբական ազգային շարժման արմատականացման գործընթացը և այն պայմանավորող գործոնները:

Արաբական քաղաքական ընդդիմությանն այդպես էլ չհաջողվեց ստիպել իթթիհադական կառավարությանն ընդունել կոնգրեսի որոշումները և, փաստորեն, իշխանությունների ճնշման տակ նահանջեց իր դիրքերից:

Կենտրոնական իշխանությունների անհանդուրժողականության և ազգային հարցում որևէ զիջման չգնալու ցանկության այս հերթական դրսևորումը հստակորեն ցույց էր տալիս, որ արաբ ազգայնականների պայքարի սահմանադրական մեթոդները վերջնականապես սպառել են իրենց, և նախկին գործելակերպի շարունակումն այլևս անհեռանկար է: Արաբների առջև կրկին, այս անգամ առավել լրջորեն ծառանում էր պայքարի նոր միջոցների որոնման խնդիրը, և արդեն ակնհայտ էր դառնում պայքարի ուժային ձևերին անցնելու անհրաժեշտությունը: Արաբական ազատագրական շարժման մեջ առաջ եկած նոր

միտումների առավել ակնհայտ վկայությունն էր արաբ սպաների դերի մեծացումը: 1913թ. հոկտեմբերի 28-ին օսմանյան բանակի մայոր Ազիզ Ալի ալ-Միսրին իր համախոհների հետ ստեղծեց «Ալ-Ահդ» գաղտնի արմատական ընկերությունը, որի մեջ գերիշխում էր զինվորական տարրը: «Ալ-Ահդի» հիմնական և առաջնային նպատակն էր արաբական երկրներում ներքին ինքնավարության հաստատումը Օսմանյան կայսրության սահմաններում՝ Ավստրո-Հունգարիայի դուալիստական պետության օրինակով, որի իրականացման համար նրանք չէին բացառում ուժային մեթոդների կիրառումը:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում ստեղծված բարդ և հակասական իրադրությունը, ինչպես նաև երիտթուրքերի վարած ազգային քաղաքականությունն իր բնույթով, արաբական ազգային շարժման ղեկավարների համար վերջնականապես պարզ դարձրին իրենց ազգային հարցերի լուծման գործում սահմանադրական միջոցներին ապավինելու անհեռանկարությունը և դրդեցին նրանց պայքարի այլ, առավել արդյունավետ ձևերի: Սակայն, այսուհանդերձ, արաբ ազգային գործիչների մեծամասնությունը առաջ չէին քաշում արաբական վիլայեթների անկախության խնդիրը և դեմ էին կայսրության մասնատմանը՝ նրա ամբողջականության պահպանումը համարելով եվրոպական տերությունների կողմից գնալով ուժեղացող գաղութարարական քաղաքականությանը դիմազրավելու միակ միջոց:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է.

-Երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում ծավալված ազգային շարժման բնույթը, հետապնդած նպատակները և զարգացման ողջ ընթացքը պայմանավորված էր մի ամբողջ շարք ներքին և արտաքին գործոններով և առաջին հերթին երիտթուրքերի կայսրության ոչ թուրք ազգաբնակչության նկատմամբ իրականացվող ազգային քաղաքականությամբ:

-Իշխանության սկզբնական շրջանում երիտթուրքական կառավարության՝ կայսրության ողջ ազգաբնակչությանը, անկախ ազգային և դավանանքային պատկանելությունից, հավասար իրավունքներ տրամադրելու խոստումը մեծ չափով ոգևորեց նաև արաբներին, որոնք չհապաղեցին ցուցաբերել իրենց հավատարմությունը երիտթուրքերին և հայտնել Սահմանադրության դրույթներն իրականացնելու գործում նրանց

աջակցելու պատրաստակամությունը: Սակայն շատ շուտով կայսրության կենտրոնացման մոլուցքով տարված իթթիհադական ղեկավարները, որոնք այդ նպատակի իրականացման հնարավորությունը տեսնում էին կայսրությունում թուրքական տարրի գերակայության հաստատման մեջ, այլևս չէին թաքցնում իրենց իսկական դիտավորությունները: Իթթիհադականների կառավարության քաղաքականության այսպիսի կտրուկ փոփոխությունը ոչ միայն հիասթափեցրեց արաբներին, այլև բորբոքեց նրանց ազգային զգացումները և դրդեց իրենց ազգային ձգտումների իրականացման համար այլ ուղիներ որոնել: Կայսրության արաբական վիլայեթներում, ինչպես նաև արտերկրում արաբ ազգայնականների նախաձեռնությամբ ստեղծվեցին իթթիհադականներին ընդդիմադիր կուսակցություններ, կազմակերպություններ և խմբավորումներ:

-Արաբական ազգային կազմակերպությունների գերակշիռ մասն իր հիմնական խնդիրն էր համարում արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման ձեռքբերումը: Արաբական շարժման այս առանձնահատկությունը պայմանավորված էր կայսրությունում արաբների մեծամասնություն կազմելու հանգամանքով և թուրքերի հետ նրանց մեծ մասի դավանանքային ընդհանրությամբ, ինչը վերջիններիս թույլ է տվել զգալ իրենց օսմանցի և արաբական վիլայեթները դիտել որպես կայսրության անբաժան մաս, մանավանդ այն պարագայում, երբ կայսրության արաբական վիլայեթների նկատմամբ Արևմտյան տերությունների անթաքույց դիտավորությունները սպառնում էին այդ վիլայեթների գաղութացմանը, ինչն ըստ արաբների՝ շատ ավելի մեծ չարիք էր, քան Օսմանյան կայսրությունը: Վերոնշյալով է պայմանավորված արաբների լոյալությունը կայսրությանը և կայսրության միասնականությունն ու հզորությունը պահպանելու ձգտումը, ինչը և երկար ժամանակ արաբական շարժումը սահմանափակում էր միայն ապակենտրոնացման պահանջով:

-Արաբ ազգային գործիչները, միաժամանակ, նույնքան կարևորում էին արաբների առանձին, ինքնուրույն ազգ լինելու հանգամանքը, ինչի ճանաչումը պետք է ապահովեր նրանց ազգային իրավունքների և պահանջների օրինականության ընդունումը: Պատահական չէ, որ արաբ ազգային կազմակերպությունները, առանց բացառության, իրենց ծրագրերում մեծ տեղ էին հատկացնում ազգային ընդհանրությունը հաստատող ամենագլխավոր չափանիշի՝ լեզվի պահպանման և արաբական վիլայեթներում նրա

կիրառման ոլորտն ընդարձակելու պահանջին և նույնիսկ առաջարկում էին թուրքերենի հետ միասին արաբերենը ևս դարձնել Օսմանյան խորհրդարանի աշխատանքային լեզու:

Լեզվի նկատմամբ այս առանձնահատուկ վերաբերմունքը բացատրվում էր նաև նրանով, որ արաբ ազգային գործիչները լեզվի պահպանումը դիտում էին որպես իթթիհադականների վարած ձուլման քաղաքականությանը դիմակայելու և դրանց դիմագրավելու միակ վստահելի միջոց:

-Արաբական ազգային շարժման այս փուլի էվոլյուցիան ի վերջո հանգեցրեց շարժման հետագա արմատականացման և այնպիսի կազմակերպությունների հիմնման, (ինչպես՝ «Երիտասարդ Արաբիան» և «Ալ-Ահդը»), որոնք ստեղծված իրադրության պայմաններում իրենց ազգային նպատակներին հասնելու համար չէին բացառում նաև ուժային մեթոդների կիրառումը:

Այսպիսով, երիտթուրքերի օրոք արաբական ազգային շարժումն անժխտելիորեն կարևոր նշանակություն ունեցավ արաբների ազգային նպատակների հստակեցման, այդ նպատակների շուրջ արաբների համախմբման և նրանց գործողություններին ճիշտ ուղղվածություն տալու համար: Այդ շարժումը ոչ միայն ամրապնդեց արաբների վստահությունն իրենց ուժերի նկատմամբ, այլև մեծ չափով նպաստեց արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները

1. Գասպարյան Ա., Օսմանյան կայսրության սիրիական վիլայեթներում արաբերեն լեզվի վիճակը երիտթուրքերի կառավարման օրոք, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Եր., 2004, էջ 51-58:
2. Գասպարյան Ա., Խորհրդարանական ընտրություններն Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Եր., 2005, էջ 77-87:
3. Գասպարյան Ա., Արաբ սպաների դերը ազգային-ազատագրական շարժման մեջ. Ազիզ Ալի ալ-Միսրի, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (Հոդվածների ժողովածու), հ., II, Եր., 2005, էջ 73-75:

4. Գասպարյան Ա., Առաջին արաբական կոնգրեսը, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, 2 (27), Եր., 2006, էջ 142-147:

ГАСПАРЯН АРАМ АШОТОВИЧ

АРАБЫ И МЛАДОТУРКИ 1908-1914ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02. – "Всемирная История".

Защита состоится 16 июня 2006г. в 13 часов на заседании специализированного совета 006 по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г., Институт востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению арабского национального движения в Османской империи в период после прихода к власти комитета "Иттихад ве теракки" (до 1914г.).

Всестороннее изучение вопросов, касающихся этого периода истории арабов, вызвано необходимостью по возможности полного исследования длительной национальной борьбы арабского народа, выявления обстоятельств, обусловивших процесс ее развития, а также для прояснения и уточнения ее основных целей.

Исследование данной темы имеет чрезвычайно важное значение для изучения национальной борьбы других нетурецких народов Османской империи, а также для понимания происходивших в этот период внутри - и внешнеполитических процессов.

Исключительной важностью этого этапа арабского национального движения является то, что в силу различных обстоятельств именно в этот период были сформулированы идеология арабского национального движения и основные принципы его деятельности.

Тема диссертации не становилась предметом отдельного исследования, хотя ее различные аспекты освещались в армянской и зарубежной историографии.

По содержанию и структуре данная работа является первым подобным исследованием в армянском востоковедении.

Диссертация состоит из предисловия, трех глав (каждая из которых содержит разделы), заключения, списка использованных первоисточников и научной литературы, а также пяти приложений.

В предисловии обосновывается актуальность и важность темы диссертации, формулируются ее цели и задачи, научная новизна и теоретическое и практическое значение. В исследовании также дается краткий обзор использованных источников и литературы, раскрываются методологические основы исследования.

В первой главе диссертации ("Младотурецкая революция 1908г. и арабско-турецкие отношения (до апреля 1909г.)") рассматривается внутренняя ситуация в арабских вилайетах Османской империи в дореволюционный период, деятельность нетурецких народов империи, в том числе и арабов в содействии подготовки революции. Обсуждаются также отношение арабского населения к иттихадистам в начальный период после победы революции и обстоятельства, обусловившие характер этих отношений.

В данной главе рассматриваются также цели и деятельность, созданной в этот период легальной арабской организации "Арабо-османское братство".

Вторая глава ("Изменение позиции арабов (апрель 1909-октябрь 1912гг.)") посвящена изучению трансформации национальной политики младотурецких руководителей и соответственному изменению к ним отношения арабов, с чем и непосредственно связано формирование оппозиции арабов к иттихадистам и создание арабских антииттихадистких организаций нового поколения. В этой главе дается обстоятельный анализ программ и деятельности некоторых из этих организаций, в частности "Аль-Кахтании", "Литературного клуба", "Молодой Аравии" и др. Анализируется также участие и роль арабских национальных деятелей в общеосманских опозиционных организациях.

В третьей главе ("Формирование арабского национально-освободительного движения") исследуются обстоятельства создания "Османской партии административной децентрализации", активизация движения децентрализации в арабских вилайетах и формирование Комитетов реформ, преследовавших ту же цель децентрализации.

В этой главе расматриваются также процесс осознания необходимости объединения арабских сил и координирования их действий в сложившейся ситуации, а также созыв в этих целях Первого арабского конгресса в Париже в середине 1913г. В главе представлены подробный анализ работы конгресса и его результаты.

Рассматривается также процесс радикализации арабского национального движения накануне Первой мировой войны. В этой связи более детально освещается деятельность основанной арабскими офицерами тайной радикальной организации "Аль-Ахд".

В заключении диссертации представлены основные выводы по рассмотренным в работе проблемам.

Исследуемый период истории арабского национального движения имел непосредственное и существенное влияние на весь дальнейший процесс национально-освободительной борьбы арабского народа и во многом определил его направленность и последующее развитие.

ARAM A. GASPARYAN

THE ARABS AND THE YOUNG TURKS (1908-1914)